ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0077, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 26

«26» ապրիլի 2012թ.
Հ2-708

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ ՊԱՐՈՆ Դ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սարգսյան,

Ի պատասխան Ձեր 2012 թվականի ապրիլի 11-ի թիվ 02/12.3/5179-12 գրության՝ հայտնում ենք, որ «Ժամկետանց պեստիցիդների վերացման և կանխարգելման կարողությունների ուժեղացում՝ որպես նախկին Խորհրդային Միությունում չօգտագործվող վտանգավոր քիմիկատների վերացման համար մոդել» տարածաշրջանային ծրագրի համաձայնագրի կնքման առաջարկությանը համաձայնություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ սկզբունքային դիտողություններ և առաջարկություններ չկան:

Միաժամանակ, Ձեզ ենք ուղարկում նաև համաձայնագրի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի իրավաբանական վարչության եզրակացությունը:

Առդիր 1 էջ:

Հարգանքով՝

Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

010-11319
26 04 12

Ն. Բաղդասարյան

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«Ժամկետանց պեստիցիդների վերացման և կանխարգելման կարողությունների ուժեղացում՝ որպես նախկին Խորհրդային Միությունում չօգտագործվող վտանգավոր քիմիկատների վերացման համար մոդել» տարածաշրջանային ծրագրի համաձայնագրի նախագծի վերաբերյալ

«Ժամկետանց պեստիցիդների վերացման և կանխարգելման կարողությունների ուժեղացում՝ որպես նախկին Խորհրդային Միությունում չօգտագործվող վտանգավոր քիմիկատների վերացման համար մոդել» տարածաշրջանային ծրագրի համաձայնագրի նախագծի վերաբերյալ ներկայացնում ենք հետևյալ նկատառումը.

Համաձայնագրի նախագծի 19-րդ կետով նախատեսվում է, որ համաձայնագիրը ուժի մեջ կմտնի ստորագրման պահից: Սակայն, այս դրույթը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 6-րդ հոդվածի և «Միջազգային պայմանագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին, որոնց համաձայն միջազգային պայմանագրերն ուժի մեջ են մտնում միայն վավերացվելուց կամ հաստատվելուց հետո:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ

Ա. ԹՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Ա. Ղարիբջանյան